

# ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ՇՐՋԱՊԱՏԵԼ ԱՄԵՆՕՐՅԱ ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՄԲ

Ադրբեջանական ԽՍՀ-ից հայ բնակչության զանգվածային արտագաղթը Հայաստանում ծնեց գաղթականների պրոբլեմը: Այդ պրոբլեմն առաջ եկավ հանրապետության ծանր տնտեսական վիճակի ֆոնի վրա, որի մեջ նա հայտնվել է լճացման ժամանակաշրջանի սխալների և աննախադեպ ավերիչ երկրաշարժի հետևանքով:

Ստեղծված իրավիճակը ծանրը բեռի նման ընկավ հանրապետության, նրա աշխատավորների և առանձնապես այն մարդկանց ուներին, ովքեր հարկադրաբար լքեցին իրենց բնակության վայրերը, իրենց նախնիների հայրենիքը:

Ինչպե՞ս է լուծվում ծագած պրոբլեմը, ինչպիսի՞ լրացուցիչ միջոցներ է անհրաժեշտ ձեռնարկել գաղթականների վիճակը թեթևացնելու, նրանց տեղավորելու, հանրօգուտ աշխատանքային գործունեության մեջ ներգրավելու համար: Այս և Ադրբեջանից հայ բնակչության զանգվածային գաղթի հետ կապված ուրիշ հարցեր քննարկվեցին հանրապետական խորհրդակցությունում, որը հրավիրել էր Հայկական ԽՍՀ Միճխտրների խորհուրդը:

Բացելով խորհրդակցությունը, Հայկական ԽՍՀ Միճխտրների խորհրդի նախագահ Վ. Մարգարյանն ասաց.

— Հայկական ԽՍՀ տասնմեկերորդ գումարման Գերագույն խորհրդի արտահերթ 10-րդ նստաշրջանում մի խումբ դեպուտատների առաջարկով որոշվեց մտքերի փոխանակություն չծավալել «Գաղթականների տեղավորման և այդ աշխատանքը բարելավելու լրացուցիչ միջոցառումների մասին» Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և Հայկական ԽՍՀ Միճխտրների խորհրդի որոշման կատարման մասին» Հայկական ԽՍՀ Միճխտրների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Վ. Մովսիսյանի զեկուցման շուրջը, այն հաշվով, որ ամենամոտ ժամանակներս հանրապետական խորհրդակցություն հրավիրվի գաղթականների ներկայացուցիչների մասնակցությամբ, համակողմանիորեն ու հանգամանորեն քննարկվեն մշտական բնակության վայրերը հարկադրաբար լքած քաղաքացիների սոցիալ-կենցաղային պայմանների ապահովմանն առնչվող բոլոր հարցերը:

Հաշվի առնելով արված առաջարկությունները, նախապատրաստվել է սույն խորհրդակցությունը: Խորհրդակցության աշխատանքին մասնակցում են միճխտրներ, պետական կոմիտեների ղեկավարներ, կուսակցության քաղկոմների և շրջկոմների քարտուղարներ, ժողովրդական դեպուտատների քաղաքային ու շրջանային խորհուրդների նախագահներ, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի գաղթականների գործերի հանձնաժողովի անդամներ, գերատեսչությունների, հասարակական կազմակերպությունների ու ստեղծագործական միությունների, արդյունաբերական ձեռնարկությունների ու շինարարական կազմակերպությունների ղեկավարներ, Ադրբեջանական ԽՍՀ-ում մշտական բնակության վայրերը հարկադրաբար լքած քաղաքացիների ներկայացուցիչներ:

Զեկուցումով հանդես եկավ Հայկական ԽՍՀ Միճխտրների խորհրդի նախագահի առաջին տեղակալ, հանրապետության Գերագույն խորհրդի գաղթականների գործերի հանձնաժողովի նախագահ Վ. Մովսիսյանը:

Ազգամիջյան հարաբերությունների սրման հետևանքով Ադրբեջանից մեր հանրապետություն են եկել 215 հազար, երևալին Ղարաբաղ են տեղափոխվել մոտավորապես 21 հազար գաղթականներ, Մոսկայում գտնվում են ավելի քան

5200, ՌԽՖՍՀ-ի և Հյուսիսային Կովկասի մյուս ռեգիոններում մոտավորապես 25 հազար գաղթականներ:

Հայաստանի կառավարությունը, լուծելով հանրապետության նոր քաղաքացիների համար նորմալ պայմանների ստեղծման հետ կապված պրոբլեմները, քննարկում է հարցերի մի ամբողջ կոմպլեքս, ելնելով ռեալ իրադրությունից, առկա հնարավորություններից:

Ձեռնարկված միջոցների շրջանում արդեն տեղավորվել է 108 հազար մարդ, աշխատունակ քաղաքացիների համարյա կեսը աշխատանքի է ընդունվել: Լուծվում են բնակարանների փոխանակման, գաղթականների անձնական ունեցվածքին պատճառված վրճարների փոխհատուցման, անհատական շինարարության համար վարկերի տրման և միանվագ նպաստների վճարման, աշխատանքային ստաժի պարգևան, գրանցման, կորած փաստաթղթերի վերականգնման հարցերը:

Երևանից քացի ամենուրեք վերացվել են գրանցման և աշխատանքի տեղավորման սահմանափակումները: Նոր քաղաքացիները, անկախ գերանցման առկայությունից ու ժամկետից, կարող են աշխատանքի տեղավորվել: Վարդենիսի, Ազիզբեկովի, Կրասնոսելսկի, Միսիանի ու մի քանի այլ շրջաններում, աշխատատեղերի առկայությունից քացի, հնարավորություններ կան ստանալու բնակավայրեր՝ տրանսպորտ հողամասերով հանդերձ:

Ելնելով նրանից, որ գաղթականների ճնշող մեծամասնությունը նախկին քաղաքացիներ են, զանազան պրոֆեսիաների մասնագետներ, միջոցներ են ձեռնարկվում նրանց հնարավորությունների լայն օգտագործման համար: Այդ նպատակով պատրաստվում է գյուղական վայրերում արդյունաբերական ձեռնարկությունների մասնաճյուղերի և կոոպերատիվների ցանցի զարգացման ծրագիր, մշակվում են այլ առաջարկներ:

Նախատեսված է Բաղրամյանի և Աշտարակի շրջաններում, ինչպես նաև Արուսյանում, Հրազդանում ու Չարենցավանում 8000 ընտանիքների համար նախագծել ու կառուցել բնակելի կոոպերատիվ տներ:

Մի շարք գյուղերում գաղթականներին տրվում են տրանսպորտ հողամասերով տներ:

Խորհրդակցությունում ելույթ ունեցան ժողովրդական դեպուտատների Արուսյանի քաղաքային խորհրդի ցործկոմի նախագահ Վ. Ավագյանը, պրոֆեսոր Գ. Ավագյանը, Մասիսի կուսընկերության առաջին քարտուղար Ա. Հարությունյանը, «Հայարդգագ» արտադրական միավորման գլխավոր ղեկավար Գ. Թաթարյանը, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի դեպուտատներ Ռ. Ղազարյանը, Խ. Ստամբոլյանը, Ա. Մանուչարյանը, Ղուկասյանի կուսընկերության առաջին քարտուղար Ա. Գոմցյանը, քանաստեղծուհի Մ. Մարգարյանը, Հայկական ԽՍՀ աշխատանքի ու սոցիալական հարցերի պետական կոմիտեի նախագահ Ի. Սեմյոնովը, հանրապետության Գերագույն խորհրդի դեպուտատներ՝ Ակարիչ Ս. Մուրադյանը, կոմպոզիտոր Է. Միրզոյանը, պատերազմի վետերանների հանրապետական խորհրդի նախագահ Ա. Ղազարյանը, ինչպես նաև գաղթականների ներկայացուցիչներ Ա. Կալոյանը, Յու. Գալեյանը, Լ. Հարությունյանը, Ջ. Մուրադյանը, Ֆ. Պետրոսյանը, Վ. Արզումանյանը, Է. Վանեսյանը:

Նրանք խոսեցին գաղթականների կարիքների նկատմամբ ամենօրյա հոգատարությունը և ուշադրությունը ակտիվացնելու, նրանց աշխատանքի տեղավորումն արա-

զանցնելու, ծայրամասային գյուղերը նոր քաղաքացիներով բնակեցնելու, իշխանության տեղական մարմինների աշխատանքի և տնտեսությունների գործունեության կառավարման մեջ նրանց ներգրավելու մասին, այն մասին, որ անհրաժեշտ է ամենակարգ ժամանակամիջոցում վերացնել տեղական խորհուրդների գործկոմների և տնտեսական մարմինների ապարատներում գոյություն ունեցող բյուրոկրատիկ դրսևորումները:

Առաջարկվեց գաղթականների տեղավորման գործում կոորդինացնել աշխատանքները բոլոր մակարդակներում, կազմակերպել մայրենի լեզվի ուսուցման տարբեր ձևեր, կենցաղային պայմաններ ստեղծել բնակեցվող գյուղերում, ինչպես նաև ժամանակավորապես դադարեցնել շինանյութերի քաղցողումը ամառանոցային տների և ոչ առաջին անհրաժեշտության մյուս օբյեկտների շինարարության համար, նպատակ ունենալով ավելի լրիվ ապահովել երկրաշարժի գոտու և գաղթականների անհատական տնաշինության պահանջարկները:

Ելույթ ունեցողները շնորհակալությամբ էին նշում «Հայարդգագ» արտադրական միավորման կոլեկտիվի գթասիրտ գործունեությունը (գլխավոր ղեկավար՝ Գ. Թաթարյան), որի նախաձեռնությամբ Արուսյանի շրջանի Բյուրեղավանում բնակելի տների և այլ օբյեկտների ըստեղծման նպատակով ներգրավված 300 շինարարների համար սկսվել է բազայի կառուցումը:

Միավորումը մոտավորապես 12 միլիոն ռուբլի է հատկացրել շինարարական աշխատանքներին, որոնց մեջ մտնում է 5000 բնակչի համար նախատեսված ավանի ամբողջ ենթակառուցվածքը՝ դպրոցը, մանկապարտեզը, պոլիկլինիկան, խանութներն ու մյուս օբյեկտները, ինչպես նաև հաշմանդամների և չունևոր ընտանիքների համար մի քանի տուն: Առաջարկվեց «Հայարդգագ» արտադրական միավորման նախաձեռնությունը տարածել մյուս ձեռնարկություններում, կազմակերպել դրանց շեֆությունը վերաբնակիչների գյուղերի ու ավանների նկատմամբ:

Ելույթներում ընդգծվում էր, որ գաղթականների պրոբլեմը ամենից առաջ քաղաքական ու քարոշական պրոբլեմ է, որի լուծմանը պետք է իրենց ամենագործուն մասնակցությունը բերեն ոչ միայն պետական մարմինները, այլև բոլոր հասարակական կազմակերպությունները, արդյունաբերական ձեռնարկությունների կոլեկտիվները, գաղթականներն իրենք, հանրապետության բոլոր աշխատավորները: Անհրաժեշտ է ամենուրեք ստեղծել այնպիսի քարոշահոգեբանական կլիմա, որն ավելի արագորեն վերականգնի մարդկանց նորմալ հոգեվիճակը, նրանց թույլ տա ակտիվորեն ներգրավվել հանրօգուտ աշխատանքում:

Կարծիքների և առաջարկների փոխանակումից հետո Վ. Մովսիսյանը հանգամանորեն պատասխանեց խորհրդակցության մասնակիցների քաղաքացիական հարցերին:

Ամփոփելով խորհրդակցության արդյունքները, Հայկական ԽՍՀ Միճխտրների խորհրդի նախագահ Վ. Մարգարյանն ասաց, որ կառավարությունը մշակել է մարդկանց ճշմարտությունը և միայն ճշմարտությունն ասելու պրակտիկա, քանի որ տղմտեպական հիմք ու նախադր-

# Գ Ա Ղ Թ Ա Կ Ա Ն Ն Ե Ր Ի Ն Շ Ր Զ Ա Պ Ա Տ Ե Լ ԱՄԵՆՕՐՅԱ ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՄԲ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

լայներ չունեցող հույզերի ու ցանկությունների հիման վրա արվող դատողությունները կարող են փակուղի մտցնել: Դրանք ուշադրությունը շեղում են կոնկրետ հարցերի լուծումից, ստեղծում անվստահության և ամենաթողության մթնոլորտ, մարդկանց տրամադրում խնամատուականության:

Վ. Մարգարյանը մանրամասնորեն պատմեց հանրապետության ծանր տնտեսական դրության և ճգնաժամային վիճակից դուրս գալու ուղիների մասին: Նա նշեց, որ ազգամիջյան ընդհանրումները, կարգապահության անկումն ու ամենաթողությունը, ավերիչ երկրաշարժը, մարդկանց զանգվածային գաղթը և Հայաստանի տնտեսական շրջափակումը այնպիսի պայմաններ են ստեղծել, որոնք պահանջում են ամենաբարդ և չնախատեսված պրոբլեմների ամենամյա լուծում:

Իրադրությունը բարդացել է նաև այն պատճառով, որ ձեռնարկություններն ու կազմակերպությունները չեն կատարել պետական պլաններն ու պայմանագրային պարտավորությունները, լավ չի կազ-

մակերպված շինարարների հսկայական բանակի աշխատանքը: Երկրաշարժից տուժածներին ու գաղթականներին պանսիոնատներում պահելու համար հանրապետությունը ծախսում է ամսական մոտ 2,5 միլիոն ռուբլի:

Կառավարության, նրա մարմինների ուշադրությունը բեկումն է ճգնաժամային իրավիճակից հանրապետությունը դուրս բերելու կոնկրետ խնդիրների լուծման վրա: Ամենից առաջ անհրաժեշտ է մարդկանց ապահովել բնակարանով, նրանց համար ըստեղծել ենթակառուցվածքի նորմալ պայմաններ, ապահովել արտադրության հստակ դիմում:

Հիմա մշակվում է մի համազգային ծրագիր, որտեղ հատուկ ուշադրություն է նրվիրվում գաղթականների պրոբլեմին: Անհրաժեշտ է, որ այդ ծրագրի իրականացման մեջ ակտիվորեն ներգրավվեն հանրապետության նաև նոր քաղաքացիները: Նրանց մեջ քիչ չեն պատրաստված, բարձր որակավորում ունեցող մասնագետները, մարդիկ, որոնք կարող են ազնվորեն ու բարեխիղճ կերպով աշխատել ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերում: Այս կապակցությամբ միմիասորու-

թյուններին ու գերատեսչություններին հանձնարարված է լայնորեն օգտագործել նրանց ինտելեկտուալ պոտենցիալը, նրանց ավելի համարձակորեն ներգրավել աշխատանքի մեջ:

Դժբախտության մեջ հայտնված մեր եղբայրների ու ու բույրերի նկատմամբ շատ գթասիրտ վերաբերմունք և խոր մարդկային ուշադրություն պետք է ցույց տան բոլոր պետական և հասարակական կազմակերպությունները: Միաժամանակ անհրաժեշտ է անհաշտ պայքար մղել նրանց դեմ, ովքեր արգելքներ են հարուցում այդ գործում ջանում են հարստանալ մարդկանց դժբախտության հաշվին, թույլ են տալիս քացսական արարքներ:

Կառավարությունը ահազանգումներ է ստանում հողամասեր, բնակավայրեր հատկացնելու, վարկեր տալու դիմաց կաշառք վերցնելու, դրամ շորթելու առանձին փաստերի մասին:

Վ. Մարգարյանը քննադատեց տեղական խորհուրդների այն գործկոմերին, որոնք բյուրոկրատական քաշքշուկ են թույլ տալիս գաղ-

թականների, շինարարների տեղավորման հարցերը լուծելիս, վատ են օգտագործում առկա տեխնիկան, դրա հնարավորությունները:

Յուրաքանչյուր քաղաքում և շրջանում, առաջ նա, իշխանության տեղական մարմինների գործկոմերը պարտավոր են ինքնուրույն կերպով լուծել իրենց առաջադրված խնդիրները, գտնել միջոցների, աշխատանքային ռեսուրսների, ներքին ռեզերվների ռացիոնալ օգտագործման ուղիներ:

Նրանք պարտավոր են գաղթականներին հողամասեր հատկացնել անհատական բնակարանային շինարարության համար, ստեղծել նոր քաղաքացիների աշխատանքի տեղավորման հանձնաժողովներ, մշակել նրանց բոլոր սոցիալ-կենցաղային հարցերի լուծման ձևեր՝ կապված նրանց համար նորմալ պայմանների կազմակերպման հետ: Ընդ որում հարկավոր է առաջնային ուշադրություն ցուցաբերել հաշմանդամներին, զառամյալներին, միայնակ մարդկանց և բազմազավակ ընտանիքներին:

Այժմ կառավարությունը հատուկ ուշադրություն է նրվիրում գյուղը ոտքի կանգնեցնելու, այնտեղ այնպիսի

պայմաններ ստեղծելու, հարցերին, որոնք մարդկանց զբաղվելիս իրենց ենթակառուցվածքով, նպաստելիս գյուղերի վերածնմանը, անասնապահության, դաշտավարության, այգեգործության զարգացմանը: Բոլոր նրանք, ովքեր ուզում են բնակություն հաստատել գյուղում, հողամասերից բացի պետությունից կատանան անասուններ, շինանյութեր, կունենան անձնական տնտեսություն վարելու այլ հընարավորություններ:

Մեզ մոտ եկած մարդկանց ճնշում է անցյալի բեռը, ժամանակավոր դժվարություններ առաջացնում տեղական բնակչության հետ շփվելիս: Հարկավոր է նրանց ավելի արագորեն օգնել տիրապետելու մայրենի լեզվին, տեղի սովորություններին, նրանց համար կազմակերպել դասընթացներ, հաղորդակից դարձնել մեր կենցաղային կուլտուրային:

Օգնելով մեր եղբայրներին ու բույրերին, մենք պետք է հիշենք, որ ցույց տրված օգնությունը չպիտի դիպչի տեղական բնակչության շահերին: Միայն համատեղ ջանքերը, բարյացակամությունը, բոլոր աշխատավորների պա-

հանջմունքների նկատմամբ զգայուն վերաբերմունքը մեզ հնարավորություն կտան հաջողությամբ լուծել բոլոր պրոբլեմները, դուրս գալ ճրգնաժամային վիճակից, նախադրյալներ ստեղծել հանրապետությունը ինքնուրույն գործունեության նոր պայմանների փոխադրելու համար:

Խորհրդակցությունում գաղթականների հարցերի առթիվ արված առաջարկները կառավարությունը կընդհանրացնի, կընդունի համապատասխան որոշումներ ու կներկայացնի հանրապետության Գերագույն խորհրդի նստաշրջանի քննարկմանը:

Խորհրդակցության աշխատանքին մասնակցեցին Հայաստանի կոմկուսի Կենտկոմի երկրորդ քարտուղար Օ. Լորովը, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Մ. Սերոբյանը, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի տեղակալ Ս. Ավետիսյանը, ՀԱՄԽ-ի նախագահ Մ. Հարությունյանը, ՀԼԿԵՄ Կենտկոմի առաջին քարտուղար Հ. Հակոբյանը, Հայկական ԽՍՀ Միմիասորների խորհրդի նախագահի տեղակալ, հանրապետության պետշինի նախագահ Հ. Հովհաննիսյանը:

(Արմենյան)